ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 152

06-043-0117-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԸ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 10.05.2021 թ-ի "Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին" թիվ 104-Լ հրամանով և հիմք ընդունելով Արթուր Երջանիկի Միրզոյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Լերմոնտովո համայնքին պատկանող 06-043-0117-0001 կադաստրային ծածկագրի գույքի բաժանման արդյունքում առաջացող նոր գույքային միավորներին տրամադրել հետևյալ հասցեները՝

1.1. 1,04175հա մակերեսով նոր առաջացող գույքային միավորին՝ Լերմոնտովո համայնք, Թեժ լեռ թաղամաս, 1փ. 9փկղ. թիվ 18;

1.2. 2,8550հա մակերեսով նոր առաջացող գույքային միավորին՝ Լերմոնտովո համայնք, Թեժ լեռ թաղամաս, 1փ. 9փկղ. թիվ 18/3:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեները ենթակա են պետական գրանցման ՀՀ ԱԳԿՊԿ-ում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 153

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 06-043-0116-0013 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Նարինե Ամասյայի Մարդանյանին պատկանող 06-043-0116-0013 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝

ՀՀ Լոռու մարզ Լերմոնտովո համայնք, Թեժ լեռ թաղամաս, 1փ. 3փկղ. թիվ 13:

2.Անշարժ գույքի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով, որը ենթակա է գրանցման ՀՀ ԱԳԿՊԿ-ում:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 154

06-043-0025-0036 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԸ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 10.05.2021 թ-ի "Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին" թիվ 104-Լ հրամանով և հիմք ընդունելով Արթուր Երջանիկի Միրզոյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Արթուր Երջանիկի Միրզոյանին պատկանող 06-043-0025-0036 կադաստրային ծածկագրի գույքի բաժանման արդյունքում առաջացող նոր գույքային միավորներին տրամադրել հետևյալ հասցեները՝

1.1. 0,07884հա մակերեսով նոր առաջացող գույքային միավորին՝ Լերմոնտովո համայնք, 1փ. 1փկղ. թիվ 53;

1.2. 0,06518հա մակերեսով նոր առաջացող գույքային միավորին՝ Լերմոնտովո համայնք, 1փ. 1փկղ. թիվ 53/2:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեները ենթակա են պետական գրանցման ՀՀ ԱԳԿՊԿ-ում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 155

ԳՈՐԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՄԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղականի նքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշմամբ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-14 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզպետի 13 մարտի 2025 թ. թիվ 130-Ա որոշումը, Լերմոնտովո համայնքի ավագանու 06 սեպտեմբերի 2024 թվականի N 22-Ա որոշումը, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-225-Ն օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումը, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թ N 698-Ն որոշմամբ սահմանված կարգը, քանի որ կառույցները համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, Գորիկ Մխիթարյանի դիմումը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագծերը, չափագրման

համաձայնությունը և 20265KKCTR (29.09.2026թ.) մուտքագրման ծածկագրով տեղեկանքը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Լերմոնտովո համայնքի սեփականություն հանդիսացող 06-043-0448-0001 կադաստրային ծածկագրից 0,0200հա գ/տ նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի գործառնական նշանակության հողամասի:

2.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի սեփականություն հանդիսացող 0,0200հա բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանանակության հողամասի և հողամասի վրա կառուցված 77,97քմ ներքին մակերեսով հասարակական նշանակության շինությունների չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

3. Ճանաչել ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համյանքի սեփականություն հանդիսացող 06-043-0448-0001 կադաստրային ծածկագրից 0,0200հա բնակավայրի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանանակության հողամասի և Գորիկ Մխիթարյանի կողմից հողամասի վրա 2020թ-ին ինքնակամ կառուցված 77,97քմ ընդհանուր մակերեսով բնակելի կառուցի նկատմամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի, իսկ 2023 թ-ին 11,86քմ մակերեսով կառույցը ենթակա չէ օրինականացման:

4.Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի սեփականություն ճանաչված՝ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկված, Գորիկ Մխիթարյանի կողմից 2020թ-ին ինքնակամ կառուցված 77,97քմ ընդհանուր մակերեսով շինությունը:

5.Դիմել ՀՀ կառավարությանն առընթեր ԱԳԿՊԿ, ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համյանքի անվամբ պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 156

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 43-րդ հոդվածով, "Նորմատիվ իրավական ակտերի մասին" որոշման 37 կետով, ՀՀ Հողային օրենքգրքի 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2011 թ-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով Լոռի1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փոստաթուղթը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Լերմոնտովո համայնքի վարչական սահմաններում գտնվող 06-043-0448-0001 կադաստրային ծածկագրի տակ գտնվող հողամասի գործառնական նշանակությունը՝ գ/տ այլ գործառնական նշանակությունից փոխադրել բնակավայրերի գործառնական նշանակության:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր ԱԳԿՊԿ-ում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 157

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ ՀՕ 5-րդ հոդվածի 5-րդ կետով, "Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին" ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 15.11.2005 թ-ի թիվ 2247-Ն որոշումով և հիմք ընդունելով "ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ" ԱՁ-ի կողմից /որակավորման վկայական 0332 2014-05-14, մուտքագրման ծածկագիրը 2026DSF2GH/ կազմված հատակագիծը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել ՀՀ կառավարության 15.11.2005թ-ի թիվ 2247-Ն որոշումով /հավելված 5/ Անտառաշեն /Գազանաբուծական/ համայնքային սեփականություն փոխանցված 06-026-0016-0041 ծածկագրով 0.118965հա՝ գ/տ նպատակային նշանակության արոտավայրի սահմանները համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Դիմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե սույն ուղղումից ծագող իրավունքների պետական գրանցում կատարելու, համայնքային սեփականության իրավունքի վկայական տրամադրելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**